

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻՆ ԵՎ ՆՐԱ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ»

Գ. Խ. ՍԱՐԳՍՅԱՆ

Մովսես Խորենացին ապրել ու գործել է մի դարում, որո ջրբաժան դիժ է եղել հայ ժողովրդի երեքհազարամյա պատմության մեջ: Դրանից առաջ՝ քաղաքական գործունեության երկար դարեր, հզոր պետականության ստեղծում, իսկ մշակույթի բնագավառում՝ արժեքների աստիճանական կուտակում. դրանից սկսած՝ պետական առումով նվաղում, բայց մշակութային հզոր ու հարատև վերելք, քաղաքական աղդեցության տարածման փոխարեն՝ քաղաքակրթության աղդեցության առավել լայն ծավալում:

Ֆեոդալական հասարակության հաստատումը, որի հետ էր, ի վերջո, կապված բեկման նշված երևույթը, IV դարում և V դարի սկզբում իր հետ բերեց նաև հակասությունների ծայրահեղ սրում Հայաստանի կենտրոնական իշխանության և ֆեոդալ նախարարների միջև, որը հաճախ վերածվում էր արյունալի ընդհարումների: Միևնույն ժամանակ ավելի ահեղ բնույթ էին ստացել հռոմեա-պարսկական դարավոր հակամարտության դրսևորումները երկու հզոր տերությունների միջև բնկած հայկական հողի վրա: Ներքին ու արտաքին այս պարագաներն, ահա, հանգեցրին հին հայկական, շուրջ հազարամյա պատմություն ունեցող պետության թուլացմանը, ջլատմանն ու անկմանը: 387 թ. երկիրը բաժանվեց Հռոմի և Պարսկաստանի միջև, ըստ որում արևմտյան, ավելի փոքր մասը շատ շուտով ներմուծվեց հռոմեական (բյուզանդական) վարչական համակարգի մեջ, իսկ արևելյան, հիմնական մասում հայ Արշակունիների իշխանությունը շարունակվեց մինչև 428 թ., որից հետո Հայաստանը վերածվեց պարսկական մարդպանության: Պետության վերացմամբ ժողովուրդը զրկվեց օտար բռնակալության դեմ պայքարելու իր գլխավոր միջոցներից մեկից:

Միաժամանակ, նույն IV—V դարերի սահմանագլխին ստեղծվեցին հայոց նշանադրերը: Դրերի գյուտը նախապատրաստված էր բազմաթիվ հանգամանքներով: Նախ, Հայաստանում դարեր ի վեր կիրառվում էին զրավոր լեզուներ՝ արամեերենը, հունարենը, ալեքսանդրացիների, պարսկերենը: Այսպիսով՝ ժողովրդի անդիր հիշողության մեջ կուտակվել էին բանահյուսության տարբեր տեսակների՝ երգերի, առասպելների, ավանդությունների ամբողջ ժողովածուներ: Բացի այդ, հասունացել ու զարգացման բարձր մակարդակի էր հասել այդ բոլորի կրողը՝ հայոց լեզուն, և որոշակի նվաճումներ էին ձեռք բերվել բնության ու հասարակության նկատմամբ գիտա-փիլիսոփայական մերձեցման ոլորտում: Վերջապես, IV դարի սկզբին հաղթանակած ու պետական կրոն հայտարարված քրիստոնեությունը իր «հոգևոր սնունդը» ժողովրդին հասցնելու ուղիներ էր որոնում: Ահա այս բոլոր նախապայմանները, իսկ որպես անմիջական զրգիչ՝ նշվածներից վերջինը, հիմք հանդիսացան Մեսրոպ Մաշտոցի մեծագործության:

Դրերի գյուտից, որպես մի ակունքից, դուրս հորդեց շքեղ մատենագրություն, որի մեջ աղամանդի նման շողշողում է Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»:

Ո՞րն է հորենացու համար «Հայոց պատմահայր» պատվատիտղոսը վաստակած այդ երկի բուն արժեքը: V դարի հայ պատմագրությունը հիրավի փայլուն է, ներկայացված լինելով հեղինակների մի համաստեղություն, որը ընդգրկում է Կորյուն, Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Եղիշե, Ղազար Փարպեցի անունները: Վերջիններիս արժանիքները անսպառ են և նրանց ենթադրական, որ իրոք անընդմեջ ու հավաստի տեղեկություն ունենք IV ու V դարերի հայոց պատմության մասին, այլև վառ ու մանրամասն պատկերացում՝ պատմական երեք կարևորագույն դրվագների վերաբերյալ՝ քրիստոնեության ընդունման, գրերի գյուտի և Վարդանանց պատերազմի: Խորենացու գործը, սակայն, որակապես տարբեր է: Նա, առաջինը, հղացել ու իրականացրել է հայոց ամբողջական պատմության շարադրման գաղափարը, որն իր նշանակությամբ անմիջապես հաջորդում է Մաշտոցի դարակազմիկ հղացմանն ու գործին: Եթե սա միջոցով եզրակացնենք քաղաքական ծանր պարագաներում իր հոգևոր գանձերը անգիր հիշողության հեղհեղուկ ոլորտից փոխադրել գրավոր հաստատուն ու մնայուն ոլորտը, և այդպիսով նրան ինքնության պահպանման զենք պարգևեց, ապա Խորենացին այդ նույն պարագաներում ցուցադրեց ժողովրդին նրա պատմական նկարագիրը, նրա ակունքները, և ի հայտ բերելով անցյալի փառավոր էջերը, ուժ ու եռանդ ներշնչեց ժողովրդին՝ պայքարելու լուսավոր ապագայի համար:

1

Մովսես Խորենացու անունով, բացի «Հայոց պատմությունից», մեզ մի շարք այլ գործեր էլ են հասել. «Թուղթ առ Սահակ Արծրունի», «Պատմութիւն Հոփսիմեանց», «Յաղագս Վարդավառի», «Յաղագս պիտոյից», «Աշխարհացոյց», սակայն պարզված է, որ վերջինը հաստատապես նրա գրչին չի պատկանում, իսկ մյուսների՝ նման պատկանելությունը դեռ ապացույցներ է պահանջում: Համենայն դեպս, Խորենացու այսօր ուրվագծվող կերպարը՝ որպես մատենագրի, մտածողի ու գործչի, լիովին հեցած է նրա «Հայոց պատմության» վրա:

Նույն այդ երկից էլ գալիս են նաև առկա սակավաթիվ կենսագրական տեղեկությունները Խորենացու մասին, որոնք լրացվում են մի քանի ուրիշ հիշատակություններով ու ավանդություններով: Համաձայն այդ տեղեկությունների, պատմահայրը ծնված պիտի լինի 410 թ. մոտերքը: 20—25 տարեկան հասակում, Մաշտոցի ու Սահակ Պարթև կաթողիկոսի ղեկավարությամբ որոշ ուսում ստանալուց հետո, Մովսեսը մի խումբ երիտասարդների հետ միասին ուղարկվում է Ալեքսանդրիա, ժամանակի գիտության խոշորագույն օջախներից մեկը, կրթությունն ավարտելու: Ճանապարհին խումբն այցելում է Եգիպտոս քաղաքը և ծանոթանում այդ հինավուրց մշակութային կենտրոնի հարուստ դիվաններին: Ալեքսանդրիայում Խորենացին հմտացած պիտի լինի ժամանակի ավանդակալ գիտության՝ քերթողական, ճարտասանական, քերականական «արվեստների» մեջ և, իհարկե, կատարելագործած իր հունարենն ու սովոր գրականություն կարդացած այդ լեզվով: Ալեքսանդրիայում Խորենացին տարիներ է անց կացրել:

Այնուհետև իր րնկերակիցների հետ նա ճանապարհ է ընկնում դեպի հայրենիք, բայց ծովափին փոթորկի առիթով նրանց նավն ընկնում է Լիտվիա: Այս-

տեղից նրանք անցնում են Հունաստան և ի վերջո ժամանում Հայաստան: Այդ տեղի է ունենում 440 թ. հետո, երբ նրանց ուսուցիչները՝ Մեսրոպ Մաշտոցն ու Սահակ Պարթևը, արդեն մահացած էին:

Ըստ երևույթին, այդ ժամանակները գրերի գյուտի հարուցած ընդհանուր ոգևորությունը որոշ չափով տեղի էր տվել, և ուսյալ երիտասարդները սառը ընդունելություն են գտնում հայրենիքում: Մանավանդ, պարսկական իշխանությունների հովանավորած ասորական մշակույթի ջատագովներին ընդունելի չէին հունական մշակույթը յուրացրած ու նրա երկրպագուներ դարձած՝ գործունեության ծարավի մտավորականները, դրանց թվում և Մովսես Խորենացին: Զնայած, սակայն, դժվարին պայմաններին և նույնիսկ հալածանքներին, որոնց մասին դառնությամբ պատմում է Ղազար Փարպեցին, տուժածների թվում հիշատակելով նաև «Մովսես փիլիսոփոսին», Խորենացին աննկուն առաջ է սղում իր լուսավորական գործը, եռանդուն զբաղվելով թարգմանչական աշխատանքով և հեղինակելով ինքնուրույն երկեր:

Դարձյալ Խորենացու «Հայոց պատմության» տվյալներից բխում է, որ այդ գործը ավարտված պիտի լինի 482 թ. առաջ, այսինքն նախքան Խորենացու «Պատմության» պատվիրատուի՝ Սահակ Բագրատունու՝ այդ թվականին տեղի ունեցած մահը (եթե դա, ինչպես կարծում են, Հայաստանի հայտնի մարզպան Մահակ Բագրատունին է), քանի որ «Պատմության» մեջ նա հիշատակվում է դեռևս ապրելիս: Խորենացու հաճախակի և գովեստական անդրադարձումները իր մեկենասին, բնութագրում են սրան որպես ջերմ հայրենասերի և կրթված մարդու, որը լավ էր ըմբռնում ժամանակի պահանջները: Այնուամենայնիվ, ակներև է, որ նրա պատկերը Խորենացու կողմից գունազարդված է, և մենք չենք կարող համաձայնվել Խորենացու համեստ հայտարարության հետ, «Պատմության» ստեղծման շարժառիթը համարելով նրան: Անտարակույս, այդ մտահղացումը պատկանում է իրեն՝ Խորենացուն, նրա հանձարի արգասիքն է:

2

Խորենացու այդ աննախադեպ մտահղացումը նրան կանգնեցրել է հայ պատմագրության մեջ նույնքան աննախադեպ դժվարությունների առջև՝ սկզբունադրյունների հայթայթման գործում, և պահանջել նրանից աներևակայելի ջանքեր ու եռանդ և մանավանդ՝ հանճարեղ խորաթափանցություն: IV դարի և V դարի սկզբի պատմության համար Խորենացին ձեռքի տակ որպես աղբյուր ունեցել է վերը հիշատակված հայ պատմիչների երկերը և իր ապրած ժամանակով էլ մոտ է եղել այդ դարաշրջանին: Իսկ ի՞նչ աղբյուրներ նա կարող էր ունենալ իրենից 300, 500, 1000 և ավելի տարիներ առաջ տեղի ունեցած իրադարձությունների ու եղելությունների համար: Այդ ժամանակների պատմությունը ոչ միայն շարադրված չէր մեսրոպատու մատյաններում, այլև Խորենացու ապրած ժամանակից անջրպետված էր այնպիսի մի իրադարձությամբ, որպիսին էր քրիստոնեության հարստատումը Հայաստանում IV դարի սկզբին: Հայտնի է, որ այն, իր անվիճելի դրական արդյունքների հետ մեկտեղ, ունեցավ նաև ստվերոտ կողմեր, որոնցից կարևորագույնը հեթանոսական շրջանի սերող մշակութային ավանդույթների խաթմարումն էր, որը անդառնալի կորստյան մահաց այն ժամանակ կոտակված արժեքների մի ստվար մասը: Այսուհանդերձ, ինչպես կտեսնենք, Խորենացուն բազմիցս հաջողվել է թափանցել այդ վարագույրի հակառակ կողմը:

Դառնալով հունա-հռոմեական պատմագրությանը, որպես հորենացու «Հայոց պատմության» աղբյուրի, պիտի ընդունել, որ այդ պատմագրության այն երկերը, որոնք այժմ մեզ իրական հիմք են ծառայում հին Հայաստանի պատմությունը վերականգնելու համար, իրենց ձեռնդ մեծամասնությամբ և, ոչ առավել կարևոր է, իրենց գլխավոր նմուշներով (այն է՝ Քսենոփոնի, Պոլիբիոսի, Ստրաբոնի, Տակիտոսի, Դիոն Կասիոսի, Ապպիանոսի, Ամմիանոս Մարկելլինոսի երկերը) իրերի բերմամբ դուրս են մնացել հորենացու տեսադաշտից: Սրանք չկան պատմահոր կողմից առատորեն հիշատակվող աղբյուրների ցուցակում և չկան նաև սրանց լռելյայն օգտագործման հետքերը: Բացառություն է կազմում Հովսեփոս Փլավիոսը:

Նրա հիշատակած տասնյակների հասնող մյուս օտար հեղինակների (ինչպիսիք են, օրինակ, Բերոսոս, Աբյուդենոս, Աղեքսանդր Բաղմավիպ, Կեպադիոն, Ափրիկանոս, Պոլիկրատես, Եվադրոս, Սկամանդրոս, Փղեգոնիոս, Արիստոն, Պաղևատոս, Փիլեմոն, Պորփյուր, Խոռոհբուտ, Բարսուլա, Փերմեիանոս և այլն) հորենացու կողմից օգտագործման հանդամանքը, աստիճանը և ձևը տակավին մնում են առեղծվածային, թեև հետազոտողները բազմիցս անդադարձել են այդ խնդիրներին: Հիշատակված հեղինակների մի մասի միայն անուններն են հայտնի, իսկ գործերը չեն պահպանվել, մի այլ մասի մեզ հասած գործերում չկան հորենացու հիշատակած փաստերը (թերևս դրանք եղել են սրանց՝ մեզ հասած գործերում), մի երրորդ մասն էլ հայտնի չէ նույնիսկ անուններով:

Ինչևիցե, օտար հեղինակների ծով դրականության հետ ծանոթանալով, հորենացին թեև այնտեղ բիշ բան է գտել Հայաստանի մասին, բայց փոխարենը լայն պատկերացում է ստացել համաշխարհային պատմության վերաբերյալ, որ ի հայտ է դալիս նրա «Պատմության» յուրաքանչյուր էջում և հնարավորություն է տվել նրան հայոց պատմությունը միշտ դիտելու պատմական լայն և տնայնորդի վրա:

Միաժամանակ հորենացին հիշատակում է երեք այնպիսի մատյաններ, որոնք չեն կարող դասվել օտար մատենագրության շարքը, քանի որ ստեղծվել են Հայաստանի հողի վրա, թեև, հավանաբար, ոչ հայերեն լեզվով, համենայն դեպս՝ ոչ բոլորը հայերեն: Դրանք են. Մար Աբաս Կատինայի մատյանը, չորս «հազներգություններից» կազմված «Պիտոյից հյուսման պատմությունը» և «Մեհենական պատմություններ» մատյանները: Սրանց զոյությունը ևրկար ժամանակ կասկածի տակ է առնվել, երբեմն էլ բացարձակապես ժխտվել է մի շարք հետազոտողների կողմից, որոնք համարել են դրանք հորենացու երեակայություն ծնունդ: Թեև այժմ ևս այդ մատյանների հետ կապված բավական մոթ խնդիրներ են մնում, բայց փաստերը ցույց են տալիս, որ դրանք անպայման զոյություն են ունեցել, օգտագործվել են հորենացու կողմից և պատկանում են նրա «Պատմության» անկյունաքարերի թվին:

Մար Աբաս Կատինայի մատյանը օգտագործված է ոչ միայն հորենացու «Պատմության», այլ նաև Սերեոսի «Պատմության» կից անանուն «նախնական պատմության» մեջ, որտեղ մատյանի հեղինակը անվանված է Մարաբա Մծուրնացի: Նույն մատյանը օգտագործել է նաև VI դարի հույն հեղինակ Պրոկոպիոս Կեսարացին, և նա այն կոչում է «Հայոց պատմություն»: Մծուրնացի պատմագիրը չի կարող ապրած լինել մ. թ. ա. II դարում, ինչպես կարծում է

Խորենացին, այլ ամենայն հավանականությամբ դործել է մ. թ. IV դարում: Լկվզով ասորի, ինչպես ցույց է տալիս նրա անունը, ուրեմն և իր մայրենի լեզվի գիտակ, բնակությամբ հայկական Մծուրք քաղաքից, ուրեմն և հայերենին տիրապետող, նա իր մատյանը դրել է ըստ երևույթին հունարեն (քանի որ նրանից օգտվելու հնարավորություն է ունեցել հույն Պրոկոպիոսը): Մար Աբասի մատյանը ընդգրկել է հայկական հնագույն առասպելների գրառումներ, բայց ունեցել է նաև գրավոր աղբյուրներ, նույնիսկ, թերևս, վավերագրեր, որտեղից գալիս են նրա հաղորդած տեղեկությունները պարթև և հայ Արշակունիների մասին:

«Պիտոյից հյուսման պատմություն» մատյանը, որի հեղինակին Խորենացին չի հիշատակում, այլ միայն գովերգում է, հանրահայտ համարելով նրա անունը, մի ներբողյան է Տիգրան II-ի մասին, շարադրված այդ տեսակի երկի համար հույն դրականության մեջ մշակված կանոնների համաձայն, բայց և բավական հարազատ՝ պատմական իրականությանը: Անտիկ աղբյուրներից հաշտնի է, որ Տիգրան Մեծի պատմությունները գրվել են հենց իր օրոք և իր արքունիքում, ուրեմն և ներբողյանների բնույթով, նրա մոտ պատասպարված երկու հույն հեղինակների՝ Մետրոդորոս Սկեպսիացու և Ամփիկրատեսի կողմից: Թե դրանցից ո՞ր մեկի, կամ մի գուցե ինչ-որ բոլորովին մի այլ երկի հեղավոր ու խուլ արձագանքն է «Պիտոյից հյուսման պատմությունը», կամ թերևս, ինչպես կարծում են, դարձյալ ժողովրդական երգերի մշակում է՝ ճարտասանական կանոնների համաձայն, դժվար է ասել: (Հիշենք նաև, որ վաղ միջնադարում Հայաստանում շրջանառության մեջ է եղել Դավիթ անունով մատենագրի պատկանող մի ներբողյան ևս՝ Տիգրանի մասին):

Սակայն Խորենացին այդ «Պատմությունից» իր քաղած նյութը վերագրել է ոչ թե Տիգրան II-ին, որի մեծության մասին նա պատկերացում չի ունեցել և որի պատմությունը շատ համեստ գծերով շարադրում է այլուր, այլ մ. թ. ա. VI դարի թագավոր Տիգրան Երվանդյանին, միահյուսելով այդ նյութին վերջինիս վերաբերող և իրեն այլ աղբյուրներից հասած մի քանի տեղեկություններ, որոնց մասին կիսովի ստորև:

Վերջապես, իրականություն են նաև «Մեհենական պատմությունները»: Դրանց երկու մասերից առաջինի հեղինակն է եղել, ըստ Խորենացու, Դարանաղյաց Անիի Արամազդի տաճարի Օղլումայ (Օլիմպիոս) քուրմը, անձնավորություն, որը մեզ այլ աղբյուրներից ծանոթ չէ, իսկ երկրորդ մասի՝ ասորի հայտնի գրող Բարդաժանը (մ. թ. II—III դարեր), որը Հայաստան այցելելիս լրացրել է «Մեհենական պատմությունները»: Պարզ չէ, թե ինչ լեզվով է գրվել այս մատյանը, ու նաև բարդ խնդիր է, թե ինչպես է այն հասել Խորենացուն: Թերևս նշանակություն ունի այն հանգամանքը, որ Անի ամրոցը, ինչպես հայտնի է, եղել է Արշակունի թագավորների տոհմական գերեզմանոց և դանձարան և շարունակել է ծառայել որպես այդպիսին նաև քրիստոնեության հաստատումից հետո. շնորհիվ դրա տաճարային դիվանը՝ նրանում պահվող «Մեհենական պատմություններով» հանդերձ, կարող էր փրկվել բնաջնջումից և դառնալ Խորենացու ուսումնասիրման նյութ: Ինչևիցե, «Մեհենական պատմությունների» գոյության փաստը հաստատվում է այն զարմանալի հարադատությամբ, որ կա Արտաշես Հայոց թագավորի (մ. թ. ա. 189—160 թթ.) մասին նրա պատմության ժողովների, և նույն այդ թագավորի թողած արամեերեն վավերագրերի ու նրա ժամանակը նկարագրող հունա-հույնական պատմագիրների՝

հատկապես Ստրաբոնի հաղորդումների միջև: Լեյդ հարադատությունը ենթադրել է տալիս, նույնիսկ, թե Թղյումայ քուրմի և Ստրաբոնի օգտագործած աղբյուրները, ի վերջո, թեև միջնորդված ձևով, թերևս դալիս են միևնույն մեկնակետից, դիցուք՝ Լերտավազի թագավոր-պատմիչի պատմությունից, գրված մ. թ. ա. I դարում, կամ որևէ մի նման գործից: Թղյումայ քուրմից Լերտաշես I-ի մասին ստացած տեղեկությունները ևս, սակայն, խորենացին միշտ չէ, որ կարողացել է անշեղորեն տեղավորել իր ժամանակագրական համակարգի մեջ և մ. թ. ա. II դարի փոխարեն վերագրել է մ. թ. I դարին, միաձուլելով դրանք Տրդատ I-ի մասին ժողովրդական երգերի հետ:

Լեյսպիսին է, մոտավորապես, Մովսես խորենացու «Հայոց պատմության» մատենագրական աղբյուրների պատկերը:

Նրկրորդ տեղը՝ իրենց նշանակությամբ, խորենացու օգտագործած աղբյուրների թվում զբաղում են բանավոր աղբյուրները: Խոսքը ժողովրդական բանահյուսության այն ստեղծագործությունների մասին է, որոնք խորենացին քաղել է անմիջապես ժողովրդական բանասացների, երգիչների բերանից: Սրբանք կարելի է երկու խմբի բաժանել՝ առասպելական, դիցաբանական, որոնցից մի հազվագյուտ նմուշ է՝ Վահագնի ծննդյան երգը («Երկնէր երկին...») և պատմա-ավանդական՝ «Վիպասանների երգեր», «թվկյաց երգեր», որոնք խորենացին գրի է առել ու մեզ հասցրել ավելի մեծ բանակությամբ: Սրանցից են Լերտաշեսի ու Մաթենիկի և Լերտաշեսի ու Լերտավազի մասին երգերը:

Բանավոր աղբյուրների մի այլ տարատեսակ են տոհմական ասքերը՝ նախարարական տներում սերնդ-սերունդ հաղորդվող ու հետզհետե ձևափոխվող ու գունավորվող ավանդությունները, որոնք պատմում էին տոհմի ծագման ու առավել աչքի ընկնող ներկայացուցիչների շուրջը հյուսված պատմություններ (օրինակ, Մամիկոնյանների նախնու Զինաստանից Հայաստան դալու մասին ավանդությունը):

«Հայոց պատմության» կերտման մեջ որոշակի դեր են խաղացել վավերագրական աղբյուրները: Լեռնային հերթին պետք է նշել Լերշակունի թագավորների կողմից պարբերաբար կազմվող «Բահնամակը»՝ նախարարական տներիցանկը, որտեղ թվարկվում էին նախարարական տները՝ ըստ իրենց հզորության և զբաղեցրած ազդեցության աստիճանի: Խորենացին լայնորեն օգտագործել է այդ վավերագրերը նախարարական տների պատմությունները շարադրելիս:

Վավերագրերի մի այլ տեսակ՝ վիմական արձանագրությունները ևս միշտ եղել են պատմահոր ուշադրության կենտրոնում: Են այն դեպքերում, երբ դրանք նրա համար անընթեռնելի էին, օրինակ՝ ուրարտական սևագիր արձանագրությունները, որոնք նա հիշատակում ու նկարագրում է, թե՛ մանավանդ այն պարագաներում, երբ նրանց բովանդակությունը նրան մատչելի էր. օրինակ՝ Բանիում Տրդատ թագավորի թողած հունարեն արձանագրությունը:

Խորենացին, պատմական նյութ հայթայթելու միտումով, ուշի-ուշով ուսումնասիրել է իրեն ժամանակակից Հայաստանի քաղաքները, բերդերը, բնակավայրերը, դրանց ավերակներն ու մնացորդները և դրանց հետ կապված ավանդությունները: Լեյզ ուսումնասիրության արդյունքն են «Պատմության» մեջ մեծ տեղ զբաղեցրած քաղաքների, դաստակերտների, ավանների, բերդերի նկարագրություններն ու հիմնադրման պատմությունները: Լեյզպիսի և Վան քաղաքի, նրա հանրահայտ ջրանցքի, հնությունների ու վերջինների ստեղծման

նկարագրությունները, որոնք ուրարտական շրջանի մշակութային մնացորդների առաջին բնութագրություններն են, և Վանն ու նրա հուշարձանները ուսումնասիրած գիտնականների վկայությամբ զարմանալի հարազատ են իրականությանը: Այդպիսիք են՝ Արտաշատի, Երվանդաշատի, Երվանդակերտի, Գառնիի և այլ քաղաքների ու բնակավայրերի նկարագրությունները, որոնք լրացվում են նրանց հիմնադրման պատմություններով՝ կա՛մ ավանդություններից վերցված և կա՛մ տրամաբանորեն դուրս բերված քաղաքանունների ստուգաբանությունից:

Այս վերջին երեւոյթի՝ անունների ստուգաբանության վրա հարկ է հատուկ ծանրանալ: Բոլոր հիշատակված աղբյուրները, որքան էլ բազմաթիվ նյութեր տված լինեն Խորենացուն, այսուհանդերձ խիստ սակավ էին նրա ծրագրի իրականացումն ապահովելու համար, ուստի և անհրաժեշտ էին նորանոր փաստեր: Դրանց մի նոր ու յուրօրինակ շտեմարանը Խորենացին գտել է լեզվի բառապաշարի, հատկապես հատուկ անունների՝ պատմության խորքերից եկող կամ իրեն ժամանակակից տեղանունների, տոհմանունների, անձնանունների մեջ, վերլուծելով ու ստուգաբանելով դրանք: Արդյունքները շատ նշանակալից են եղել և հնարավորություն են տվել պատմահորը նորանոր փաստերով ու զրվագներով լրացնել իր «Պատմությունը»: Անհրաժեշտ է գեթ մի քանի օրինակներով ցուցադրել Խորենացու ստուգաբանական մեթոդները: Երվանդավան իրեն ժամանակակից տեղանունը նա բացատրում է որպես այն վայրը, ուր Արտաշես թագավորը, ճակատամարտի բռնվելով Երվանդի հետ, «վանեց» նրան: Նույն կերպ է վարվում Խորենացին նաև մի շարք անձնանունների հետ, ստուգաբանելով, օրինակ, Աբգար անունը որպես «Ավագ այր»: Հատկապես բազմաթիվ են նախարարական տոհմանունների ստուգաբանման դեպքերը, որոնցով Խորենացին լրացնում էր նախարարական տների պատմությանը վերաբերող փաստերի պակասը: Օրինակ, Խորենացին տալիս է Դիմաքսյան տոհմանվան ստուգաբանությունը, դուրս բերելով այն «դեմքի կես» բառերից, որոնց վրա կառուցվում է մի փոքրիկ պատմություն, թե ինչպես տոհմի նախնին ճակատամարտում արքային պաշտպանելիս կոշտ էր դեմքի կեսը, որից և տոհմը ստացել է Դիմաքսյան անունը:

Խորենացին իր ստուգաբանությունների շրջանը չի սահմանափակում հայոց լեզվով: Այսպես, նա «Դիմաքսյանի» ստուգաբանության հար և նման ստուգաբանություն է տալիս «Կամսարական» տոհմանվանը, հենվելով պարսկերեն լեզվի վրա: Համարելով «կամսար»-ը «կես-զուլու», նա մի նմանօրինակ դրվագ է շարադրում նաև այս դեպքում:

Արդի լեզվաբանությունը նման ստուգաբանությունները կոչում է «ժողովրդական»: Բայց իրեն՝ Խորենացուն, լեզվաբանության իր ժամանակի մսկարդակի տեսակետից, այն նույնրան հավաստի էր թվում, որքան այսօրվա լեզվաբանին՝ իր կատարած գիտական ստուգաբանությունները, որոնց վրա, ի դեպ, շատ հաճախ են հենվում և պատմաբանները:

Ընդհանուր հայացք ձգելով Խորենացու օգտագործած աղբյուրների վրա, կարելի է դարմանալ, թե որքան դրանք տարատեսակ են և բազմաբնույթ: Ըրապրած V դարում նա «Պատմության» շարադրման համար հայտնաբերել ու օգտագործել էր, ըստ էության, աղբյուրների գրեթե բոլոր այն տեսակները, որոնց վրա են կառուցում իրենց հետազոտությունները նաև այսօրվա պատմաբանները: Հիշալի, նա դանց չի առել զրավոր աղբյուրների և ոչ մի բնագա-

վառ, օգտագործելով թե՛ պատմության սիստեմատիկ շարադրանք պարունակող երկերը, թե՛ սոսկ նյութերի գրառումներ ներկայացնող ժողովածուները, թե՛ իրեն հետաքրքրող թեմային սոսկ հպանցիկ ու հեռավոր վերաբերություն ունեցող գրվածքները, թե՛ իրեն մատչելի վավերագրերն ու վիճական արձանագրությունները։ Առանձին ուշադրություն է նվիրել բանավոր աղբյուրներին և ի հայտ բերել դրանց նկատմամբ քննադատական վերաբերմունք։ Ուշի-ուշով անդրադարձել է նյութական աղբյուրներին, հաճախ մտովի վերակազմակերպել դրանք։ Վերջապես, նա որպես պատմական աղբյուր է ծառայեցրել (ըստ որում, ինչպես կարելի էր նկատել բերված օրինակներից, միանգամայն գիտակցաբար ու համակարգային ձևով) լեզուն, լեզվական տվյալները ու այն էլ ոչ միայն հայերենի, այլև օտար լեզուներին։

Այս բոլորը ինքնին արդեն դուրս են բերում պատմահոյրը թե՛ հնում պատմություններ շարադրած հեղինակների «պատմիչ» հորջորջման սահմաններից, և թե՛ հայ պատմիչների շարքից և դասում նրան համաշխարհային մշակույթի առաջնակարգ գործիչների շարքը։ Բայց խորենացու «Պատմության» գիտական, հետազոտական բնույթը էլ ավելի է ընդգծվում, եթե ծանոթանում ենք նրա՝ նյութի մերձեցման, վերլուծման ու մշակման մեթոդին։

3

Աչքի զարնող հակադրություն կա, մի կողմից, «Հայոց պատմության» հաբթ ու ողորկ, ներքին հակասություններից բացարձակապես դուրկ, հետևողական ու տրամաբանական շարադրանքի և, մյուս կողմից, նրա հիմքը կազմած տվյալների պակասավոր, խայտաբղետ, հակասական այն զանգվածի միջև, որը խորենացուն տվել են վերը բնութագրված տարաբնույթ աղբյուրները։ Եվ ակամա հարց է ծագում, թե այդ ինչպե՞ս է եղել, որ նման մի նյութի միջից վեր է խոյացել «Հայոց պատմության» հոյասլաց կերտվածքը։

1. Իր «Հայոց պատմությունը» շարադրելիս խորենացին ունեցել է երկու հիմք, մեկը նյութական՝ աղբյուրների այն զանգվածը, որ նրան հաջողվել է ժողովել, և մյուսը՝ պատմա-տրամաբանական՝ պատկերացում այն մասին, թե ի՞նչ պիտի լինի պատմությունը։ Առաջին հիմքի մասին խոսվեց, իսկ երկրորդը հետևյալն է. պատմությունը անցյալի եղելությունների ստույգ, ճշմարտացի, հավաստի վերարտադրումն է։ Բայց եթե այդպես է, ուրեմն նրա մեջ չի կարող լինել որևէ հակասություն, անհետևողականություն, անտրամաբանություն։

Ակնհայտ է, սակայն, որ խորենացու ձեռքի տակ եղած նյութի պարզ համակցումը չէր կարող հասցնել նման մի համակարգի ստեղծման։ Ուրեմն պատմահայրը մեթոդ, միջոցներ պիտի մշակեր այդ հում և խայտաբղետ նյութը կազմակերպելու, նրանից ցանկալի ճշմարտացի համակարգը կերտելու համար։ Ինչպես ցույց է տալիս «Հայոց պատմության» համապատասխան վերլուծությունը, խորենացու հիմնական սկզբունքն է. երկու իրարամերձ կամ հակառական փաստերից մեկը ճշմարտացի ու հավաստի է, իսկ մյուսը՝ անհավաստի կամ ոչ լրիվ հավաստի։ Ընտրությունը դրանց մեջ պետք է այնպես կատարել, որ պատմության հիմք դառնա հավաստի փաստը։ Բայց ընտրության համար անհրաժեշտ են չափանիշներ, և այդ չափանիշները խորենացին մշտապես ունեցել ու դորժադրել է։ Մի քանիսի մասին ինքը պատմում է. օրինակ, նա հաղորդում է, որ հունական մատյանների տվյալները նրա համար զերա-

դասելի են, ասենք, քաղղեական կամ ուարսկական մատյանների տվյալներին: Մյուսները մենք կարող ենք հեշտությամբ դուրս բերել նրա շարադրանքից. օրինակ, Խորենացին գրավոր աղբյուրներին ավելի մեծ վստահություն է ընծայում, քան բանավորներին: Այլ դեպքերում երկու փաստերի մեջ ընտրություն կատարելու նրա չափանիշները կարող են և լրիվ ակնհայտնի չլինել, թաքնված լինելով նաև նրա հուզական աշխարհում: Բայց չափանիշները միշտ կան և կիրառվում են շեշտակիորեն:

Դիցուք նյութի զանգվածի միջից ընտրված են հավաստի փաստերը: Իսկ ինչպե՞ս վարվել մնացած նյութի հետ, որը լրիվ չի հարմարվում կամ հակասության մեջ է այդ փաստերի հետ: Դե՞ն նեւել այն: Այդ դեպքում «Հայոց պատմություն» համար ժողովված առանց այն էլ սուղ նյութից կմնար փաստերի մի նոսր շարան միայն, որը չէր ապահովի պատմության ստեղծումը: Ուրեմն անհրաժեշտ է գործի դնել նաև այդ նյութը: Ինչպե՞ս: Ընտրված ճշմարիտ, հավաստի փաստերի աղորիքի միջով անց կացնելով այն, այսինքն, վարվելով այնպես, ինչպես վարվում է այսօրվա պատմաբանը: Այս կապակցությամբ բերենք ընդամենը մեկ օրինակ:

Խորենացին և Սեբեոսի երկին կից «Նախնական պատմության» անանուն հեղինակը (որի մասին վերը խոսք եղավ), մեր համոզմամբ, Սասանյան թագավորների ժամանակագրության համար ունեցել են միևնույն աղբյուրը (այդ կերևա ստորև բերվող աղյուսակից), այն տարբերությամբ, որ Անանունը ուրիշ ոչ մի աղբյուր չի ունեցել, իսկ Խորենացին ունեցել է նաև մի այնպիսին, որը նրան Սասանյան արքաների շարքի սկզբնական հատվածի գահատարիների վերաբերյալ մի հանրագումարային թիվ է տվել: Ստորև ներկայացված են Սասանյան արքաների գահատարիները առանձին-առանձին՝ դինաստիայի սկզբից՝ Արտաշիր I-ից մինչև Հազկերտ I-ը. արքայանունները զանց են առնված. վերջում տրված է յուրաքանչյուր շարքի թվերի հանրագումարը:

Իրական ժամանակագրություն	15	30	1	3	16	1	9	7	70	4	5	11	21	193
Խորենացու	»	40	46	—	—	—	9	3	70	4	—	10	11	193
Անանունի	»	50	73	—	—	—	9	3	73	4	—	11	21	224

Արքայացանկից միևնույն թագավորների բացակայությունը (որ արտահայտված է գծիկով՝ —) Խորենացու և Անանունի մոտ, ինչպես նաև մի շարք թվերի համընկնումը, համոզում են, որ դրանց ցուցակները հարազատ են նույն աղբյուրին: Մյուս կողմից, Խորենացին տալիս է միշտ հանրագումարային թիվ՝ 193 տարի, որ Անանունը չունի, ուստի և Խորենացին այն առել է ուրիշ՝ ավելի հավաստի աղբյուրից: Արդ, Խորենացին, ընդունելով այդ թիվը որպես հիմք, կռվան, նրա աղորիքով է անցկացրել արքայացանկի մյուս թվերը և այդպիսով ողջ շարքը գրավել է իրեն պատշաճող ստույգ տեղը ժամանակագրության մեջ:

Ահա նման մոտեցումն է նյութին, նրա այսօրինակ մշակումն է հիմնական այն միջոցը, որով «Հայոց պատմությունը» ստացել է իր ներքուստ անթերի և անհակասական տեսքը, ըստ որում Խորենացին երբեք մտացածին որևէ բան, նյութի ձեափոխություն չի կատարել, այլ մի նյութի մշակման ժամանակ տեսլաման հենվել է մի այլ նյութի վրա, որը նրան ինչ-ինչ պատճառներով ավելի ճշմարիտ ու հավաստի է ներկայացել:

Խորենացու այս մեթոդի առաջացման մեջ բյուրեղացած ձևով արտահայտվել է հելլենիստական դարաշրջանից եկող այն բանական, ռացիոնալիստական մոտեցումը իրերին, որի պահպանումը ապահովում էր անտիկ գիտության ավանդների հարատևումը նաև վաղ միջնադարյան շրջանում ու հատկապես Հայաստանում: Խորենացու մոտ այն արտահայտվում է նաև այլ կետերում, մասնավորապես առասպելների ու ժողովրդական ավանդությունների նկատմամբ նրա ցուցաբերած վերաբերմունքի մեջ: Խորենացին ամենևին չի մերժում առասպելներն ու ավանդությունները որպես պատմական աղբյուր: Նա միայն ջանում է պարզաբանել դրանք, վերածել ռեալ-պատմական լեզվի, զատել գերբնականը, կյանքի երևույթներին անհարիրը:

2. Իր շարադրանքը պատմահայրը առաջ է տանում երեք զուգահեռ գծերով՝ սերտորեն կապակցելով դրանք իրար հետ: Առաջին և կարևորագույն գիծը հայոց նահապետների գիծն է, սկսած Հայկից, որն այնուհետև, սկսած Պարուրից, վերածվում է հայոց թագավորների գծի, շարունակվելով մինչև վերջին իշխող Արտաշես Արշակունին: Այնուհետև սրան գումարվում է հայ կաթողիպոսների շարանը: Երկրորդ, սրանց զուգահեռ, գիծը հայ նախարարական տների պատմությունն է: Զգացվում է Խորենացու ձգտումը սրանցից ամեն մեկին իր պատշաճ հատուցել, ցույց տալ յուրաքանչյուրի ծագումը և աչքաթող չանել հետագա զարգացումը: Երրորդ գիծը, որ առաջանում է ու անհետանում ըստ անհրաժեշտության, դա Հայաստանին հարեան կամ ընդհանրապես առնչվող երկրների պատմությունն է: Այն ի հայտ է գալիս աֆրիսի հատվածներում, որտեղ հայոց պատմությունը կապակցվում է այդ երկրների պատմության հետ:

Բնականաբար, երեք այս գծերի համար Խորենացու ձեռքի տակ եղած աղբյուրները տարբեր էին, մի մասը գրավոր, մյուսը՝ բանավոր, երրորդը՝ ստուգաբանական և այլն, բայց նա հմուտ շարադրանքով այնպես է միաձուլում դրանց տվյալները, որ ստացվում է բաղմամբիվ թելերի միահյուսված կուռ ընթացք:

3. Սկսելով պատմել որևէ պատմական երևույթի, դիցուք պետական որևէ հիմնարկության ստեղծման մասին, Խորենացին այլևս բաց չի թողնում այն իր տեսադաշտից և հետևում է նրա զարգացմանը մինչև նրա բնական ավարտը կամ վախճանը: Սրինակ, նա պատմում է, որ Վաղարշակ թագավորը Արմավիրում մեհյաններ շինեց, որտեղ տեղավորեց Արեգակի և Լուսնի, ինչպես և իր նախնիների կուռքերը: Հետագայում նա ևս հինգ անգամ անդրադառնում է այդ կուռքերի բախտին, հիշատակելով տարբեր թագավորների օրոք նրանց տեղաշարժումը քաղաքից քաղաք և, վերջապես, ոչնչացումը՝ Արտաշիր Պապականի կողմից:

Շարադրանքի այսօրինակ ձևով է, որ, ի յրումն նշույթի մշակման վերը բնութագրված սկզբունքի, Խորենացին հասել է իր «Հայոց պատմության» ամբողջական, համաչափ ու սլացիկ շարադրանքին, որը համեմատելի է արվեստի մի կատարյալ դործի՝ արձանի կամ ճարտարապետական կերտվածքի հետ:

4

Ասվածը, սակայն, չի նշանակում, իհարկե, որ նույնքան ներդաշնակություն կա նաև «Հայոց պատմության» և ստույգ պատմության մեջ, վերջինիս տակ հասկանալով բոլոր ստույգ ու հավաստի աղբյուրների հիման վրա նեբ-

կայումս հնարավորին չափ վերականգնված պատմության ընթացքը: Եվ դա հնարավոր էլ չէր կարող դառնալ աղբյուրների այն հիմքի վրա, որ ուներ Խորենացին, ինչքան էլ որ նա ջանար լավագույն ձևով օգտագործել ու իրացնել այդ հիմքը: Ուստի անբնական և տարօրինակ են ոչ թե Խորենացու պատմության շեղումները, այլ տարօրինակ կլինեին նրա լիակատար հավաստիությունը: Բայց այսպիսի բնական մերձեցումը Խորենացու «Պատմությանը» երկար ժամանակ չէ, ինչ գոյություն ունի: Մինչև XIX դարի կեսերը, ընչին խոտորումներով, շարունակվել է Խորենացու նկատմամբ վաղ միջնադարի վերջերին՝ IX—X դդ. ծայր առած այն առանձնահատուկ վերաբերմունքը, այն ակնածանքը, որը նրա «Հայոց պատմությունը» վերածել է դասագրքի, հետագայում շարադրված պատմական բոլոր երկերի համապատասխան բաժինների հիմքի և սկզբնաղբյուրի: Մովսես Կաղանկատվացին, Հովհաննես Դրասխանակերտցին, Ուխտանեսը, Ասողիկը, Թովմա Արծրունին և այլք դարեր ու դարեր շարունակ, մինչև XVIII դարը շարունակել են կրկնել Խորենացու դասը մերթ կրճատելով, մերթ ընդարձակելով այն, բայց միշտ մնալով նրա գաղափարների շրջանակներում: XVIII դարից սկսվեց հայ ժողովրդի հին պատմության օտար աղբյուրների օգտագործումը, որն իր հետ քննական որոշ տարր բերեց Խորենացու երկի նկատմամբ, բայց երկար ժամանակ մրցությունն ավարտվում էր Խորենացու օգտին:

XIX դարի 70-ական թթ. վիճակը փոխվեց: Անբնադատ վերաբերմունքը վերածվեց գերքննադատության: Այդ փոփոխման նախադրյալներն էին այն ակնառու հակասությունները, որ կային մի կողմից՝ օտար (գլխավորապես հունահռոմեական) աղբյուրների այդ ժամանակ արդեն բավարար ուսումնասիրված աղբյուրների և, մյուս կողմից՝ Մովսես Խորենացու հաղորդումների միջև: Նախապատվությունը բնականաբար տրվեց անտիկ աղբյուրներին, որոնք մասամբ ժամանակակից կամ գրեթե ժամանակակից են նկարագրվող անցքերին, մասամբ էլ, թեև նրանցից հեռացած, բայց այսուհանդերձ ժամանակով շատ ավելի մոտ, քան Մովսես Խորենացին: Խորենացու տվյալները հայտարարվեցին հիմնականում անարժանահավատ (Ա. Գուտշմիդ):

Սրան շուտով ավելացավ կեղծիքի մեղադրանքը: Գտնելով Խորենացու շարադրանքում հատվածներ, որոնք քննադատների կարծիքով կարող են ծագած լինել միայն V դարից հետո՝ VI, VII և հետագա դարերի աղբյուրներից, նրանք սկսեցին պնդել, թե Խորենացին, հայտարարելով իրեն V դարի հեղինակ, թաքցրել է իր ապրելու իրական ժամանակը (Ա. Կարիեր): Մեղադրանքները գնալով ավելի սաստկանում էին և ընդգրկելով նորանոր գերքննադատորեն տրամադրված հետազոտողների, իրենց գազաթնակետին հասան այն հայտարարության մեջ, թե Խորենացու երկը ծայրեծայր միտումնավոր կեղծիք է (Գր. Խալաթյան):

Այս մեղադրանքներն, իհարկե, չմնացին անպատասխան: Հակահարվածը տրվեց երկու ուղղությամբ: Նախ՝ Խորենացուն V դարից տեղաշարժելու հիմք ծառայած աղբյուրների նոր ու մանրակրկիտ քննությամբ հաստատվեց, որ դրանց առնչվող նյութերը Խորենացին կարող էր ստանալ դեռևս V դարում, ուստի և հիմք չկա նրան տեղաշարժելու (Ֆ. Կոնիբեր). ապա՝ Խորենացու կողմից աղբյուրների, հատկապես ժողովրդական բանահյուսության կեղծման թեզը հիմնովին ժխտվեց Խորենացու «Պատմության» բանահյուսությանն առնչ-

վող հատվածների հարադատության համոզիչ ցուցադրումով (Մ. Աբեղյան)։

XX դարում հորենացու ապրած ժամանակի թվագրման մասին վեճը հետորդհետև սառեց և տասնամյակների ընթացքում երևացին միայն հատուկ կենտաշխատություններ, որոնց մի մասի հեղինակները ջանում էին նոր փաստարկներ գտնել հորենացուն V դարից տեղափոխելու և VIII կամ IX դարերում տեղադրելու (Ն. Ակիբյան, Հ. Մանանդյան), իսկ մյուսներն ամրապնդում էին այդ տեսակետի մերժման հիմքերը (Ստ. Մալխասյանց, Թադ. Ավդաբեկյան)։ Ներկայիս պատմագրության մեջ իրավամբ գերիշխող տեսակետն այն է, որ հորենացին V դարի երկրորդ կեսի հեղինակ է։

Վերջին տասնամյակների ընթացքում ավելի ուշադրություն է նվիրվել հորենացու «Հայոց պատմության»՝ Ռուբեն պատմական աղբյուրի արժեքավորման խնդրին։ Պետք է նախապես նշել, որ հորենացու նկատմամբ գերբնագատ վերաբերմունք ցուցադրող վերը հիշատակված (և բազմաթիվ հիշատակված) հեղինակների մոտեցման հիմնական արատն այն է եղել, որ նրանք իրենց ողջ ուշադրությունը սեռել են հորենացու երկի մեջ հիմնովի առկա ժամանակավրիպումների, Հայաստանի պատմությանը շվեդներով գրվածքների՝ այդ պատմությանն առնչելու դեպքերի և սրանց նման այլևայլ սխալների վրա, դրանց մեջ են դիտել հորենացու երկի էությունը, նրա համակողմանի ուսումնասիրությունը փոխարինել են միակողմանի, մասնակի քննությամբ և դրանից բխեցրած եկրակացությունները անիրավաչափորեն տարածել ողջ «Հայոց պատմության» վրա։ Նրանց կատարած աշխատանքի արտաքինապես մանրակրկիտ բնույթը չպետք է թյուրիմացության մեջ ձգի մեզ։ Նրանք փաստորեն անտեսել են հորենացու երկի կառուցադրված մասը, նրա հիմնական բովանդակությունը, որը ճիշտ և հարադատ կերպով է վերարտադրում պատմական իրականությունը։

Ահա այդ հավաստի բովանդակության վերհանման ուղղությամբ է, որ հիմնականում զնայել է հորենացու երկի ուսումնասիրությունը վերջին տասնամյակների ընթացքում ու հատկապես սովետահայ ու սովետական պատմագրության մեջ։ Ակսվելով Մ. Աբեղյանից, այն շարունակվել է Հ. Մանանդյանի աշխատություններում, որոնցում (հակառակ հեղինակի ժխտական վերաբերմունքի հորենացու ապրած ժամանակի որոշման խնդրում) շատ բարձր գնահատական և հաճախակի ու լրջագույն կիրառում են գտել «Հայոց պատմության» բազմաթիվ տվյալներ։ Իրենց ներգրտման են արել այս դործում Հ. Օրբելին, Ս. Նրեմյանը, Լ. Խաչիկյանը, Բ. Առաքելյանը, ովքեր դիտնականներից Բ. Բ. Պիոտրովսկին, Կ. Վ. Տրեբեր, Ի. Մ. Բյակոնովը, Ա. Յա. Բորիսովը, սփյուռքահայ պատմաբաններից Հրանդ Արմենը, երիտասարդ սերնդի հայագետներից Գ. Տիրացյանը, Ա. Փերիխանյանը, Հ. Բարթիկյանը, Ս. Կրկյաշարյանը և ուրիշներ՝ իրենց համապատասխան աշխատություններում։

Այդ աշխատությունների մեթոդիկան արմատապես տարբերվում է նախաբնական (XIX դարից առաջ) շրջանում հորենացու երկի օգտագործման ձևերից նրանով, որ ոչ թե սոսի հենվում է պատմահոր տվյալների վրա կամ պարզապես վերարտադրում դրանք, այլ, հաշվի առնելով տեղի ունեցած քննադատությունը, յուրաքանչյուր դեպքում նախատեսում է հորենացու հաղորդած այս կամ այն տեղեկության հավաստիության ապացուցումն ու հաստատումը այլևայլ միջոցներով։ Այս ուղղության դարգացման համար վճռական նշանակություն են ունեցել նոր վիմապրական ու հնագիտական նյութերի հայտնա-

գործումը և դիտական շրջանառության մեջ մտնելու Դրանք իրենց հետ մշտապես բերում են Խորենացու այս կամ այն, հաճախ նախապես անհավաստի համարված, հաղորդման հաստատումն ու վավերացումը:

Սկսված են նաև այս ուղղությամբ կատարվող աշխատանքի ընդհանրացման առաջին փորձերը, որոնց նպատակն է հայտնաբերումն ու հետազոտությունը այն կոնկրետ ուղիների, որոնցով Խորենացու դարից հարյուր և հազար տարիներով առաջ տեղի ունեցած հայ ժողովրդի պատմության իրողությունների մասին տեղեկությունները եկել-հասել են մեսրոպատառ դրականությանը և Խորենացուն: Ակներև է, որ հնարավոր չէ ամեն ինչ բացատրել ժողովրդական բանահյուսության կարողություններով, որքան էլ դրանք մեծ են. և արդեն իսկ պարզորոշ կերպով գծագրվում են նաև այլ ուղիներ՝ V դարից առաջ Հայաստանում պատմագրության գոյության փաստը, պատմագրություն, որ դուրսհանալիս դարձանում էր հայոց թագավորների արքունիքներում և հեթանոսական տաճարներում:

5

Մ. Խորենացու «Պատմության», իբրև միանգամայն եղակի, անփոխարինելի մի աղբյուրի պատմագիտական արժեքը գնահատելիս կարելի է նշել մի քանի հիմնական կետեր:

Նախ, դա պատմության պարբերացումն է «Հայոց պատմության» մեջ, որպես խնդրում Խորենացին լրիվ արդարացնում է պատմությունը հետազոտողի և ոչ սոսկ արձանագրողի իր համբավը:

Որպես իր շարադրանքի բնական սկիզբ և վերջ, Խորենացին ընտրում է ժողովուրդների և մասնավորապես հայ ժողովրդի առաջացումը և հին հայկական արշակունյաց պետության անկումը: Այդ ամբողջ ժամանակաշրջանը նա բաժանում է երեք հատվածների, որոնցից յուրաքանչյուրը ամփոփում է մի գրքի մեջ:

1-ին և 2-րդ գրքերի սահման է դրված Ալեքսանդր Մակեդոնացու աշխարհակալությունը: Պատմահայրը դիտել է Հայաստանը և նրա պատմությունը միայն համաշխարհային պատմության ետնախորքի վրա, որպես նրա մի մասը: Իսկ համաշխարհային պատմության նշանաձողերից մեկը՝ և՛ հնում, և՛ այժմ, համարվել ու համարվում են Ալեքսանդրի արշավանքները, որոնցից սկսվեց այսպես կոչված հելլենիստական դարաշրջանը, իր հետ բերելով մարդկության՝ նախկինում իրարից էապես անջրպետված արևելյան ու արևմտյան հատվածների դարակազմիկ միախառնում, տնտեսական ու մշակութային փոխբեղմնավորում, որը անհամեմատ արագացրեց պատմության ընթացքը:

2-րդ և 3-րդ գրքերի սահմանը բրիտանիկության ընդունումը և Տրդատ Մեծի գահակալությունն է Հայաստանում: Խլվում է առաջին հայացքից, թե այսուհե արդեն գործ ունենք զուտ հայկական, ներքին պատմության նշանաձողի հետ: Իրականում IV դարի սկիզբը, որը գաղափարախոսության բնադավառ է հայտնեցնում է քրիստոնեության հաղթանակով (ոչ միայն Հայաստանում, այլև ողջ Հռոմեական կայսրության մեջ), նոր հասարակարգի՝ ֆեոդալիզմի ծննդյան դարաշրջան էր, որը տարբեր երկրներում ունեցավ իր զանազան, բայց միանշանակ արտահայտությունները, Հայաստանում էլ սկիզբ դրեց հենտրոնական իշխանության ու ֆեոդալականացող նախարարության արյունալի պայքարին:

Խորենացի-Տևտադոտոզը էլ ավելի որոշակի է ուրվագծվում պատմության ժամանակագրության նկատմամբ իր ցուցաբերած մոտեցմամբ: «Պատմությունը ճշմարիտ է առանց ժամանակագրության», — գտնում է Խորենացին, շեշտակիորեն տարբերվելով դրանով V դարի մյուս հայ մատենագիրներից, որոնք բավական, թեև տարբեր չափերով, անհոգ են ժամանակագրության նկատմամբ:

Որպես իր ժամանակագրության սկզբնական Խորենացին բնութել է 312/311 թվականը մ. թ. ա.՝ Սելեկոս I-ի գահակալման և հանրահայտ սելեկյան տոմարի սկզբնատարին: Ընկալելով, որ Խորենացին այդ տարին համարում է նաև Ալեքսանդր Մակեդոնացու մահվան թվական (իրականում Ալեքսանդրը մահացել է 323 թ. մ. թ. ա.), բայց նա այդ անում է արևելյան, հատկապես ասորական, ժամանակագրություններում լայն տարածված այն երևույթի ազդեցության տակ, ըստ որի սելեկյան տոմարի սկզբնատարին՝ մ. թ. ա. 312/311 թ., կոչվել է նաև «Ալեքսանդր Մակեդոնացու թվական»: Իր ժամանակագրությունը Խորենացին հասցնում է մինչև մ. թ. ա. 439/440 թ. Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի մահվան տարին:

Ժամանակագրական այս համակարգը կազմում է «Հայոց պատմության» 2-րդ և 3-րդ գրքերի միջուկը, ողնաշարը և այն հենքը, որի վրա հյուսվել է պատմությունը: Ուստի ժամանակագրության և «Պատմության» բնութագրումները անհրաժեշտաբար ոչ միայն նմանվում են իրար, այլև պարզապես նույնանում: Ժամանակագրական համակարգը ներքուստ նույնքան անթերի է, փոխհամաձայնեցված, կուռ ու սլացիկ, որքան և ինքը՝ «Պատմությունը»: Այն կառուցված է աղբյուրների ժողովման, բնութագրման, դասակարգման, մշակման մեխանիզմների մեթոդներով, որոնց անդրադարձանք վերը: Ուստի և այդ, իր հիմքում հավաստի և բազմաթիվ մանրամասնություններում ճշմարտացի համակարգը ունի, ինչպես և «Պատմությունը», մի շարք շեղումներ (երբեմն՝ բավականաչափ էական) ստույգ ժամանակագրությունից, որոնց հիմքը և պատճառը լիովին Խորենացու ձևերի տակ եղած աղբյուրների պակասավորության մեջ է:

Խորենացու «Հայոց պատմությանը» հասցեագրված բազմաթիվ բննադատական դիտողությունների ու մեղադրանքների մի մասը վերաբերել է հենց այս ժամանակագրական շեղումներին, որոնց չափազանցմամբ ոմանք փորձել են արժեքադրել Խորենացու ժամանակագրությունը ամբողջապես: Մինչդեռ այդ ժամանակագրությունը, իր շեղումներով հանդերձ, հայ պատմագրության խոշորագույն նվաճումների թվին է պատկանում: Նախ և առաջ, Խորենացին հայ իրականության մեջ առաջին փորձն է կատարել կազմել որոշակի ժամանակահատվածի փոխկապակցված սինքրոնիկ ժամանակագրությունը և այդ փորձը իր հսկայական ազդեցությունն է գործել հետագայի հայ մատենագիրների վրա: Երկրորդ, Խորենացու ժամանակագրության մի շարք հատվածներ այսօր հիմք են ծառայում հայ ժողովրդի պատմության գիտական ժամանակագրությունը կազմելու գործում:

Հաջորդ կետը, որ պիտի նշենք, դա Խորենացու «Հայոց պատմության» պարունակած պատմական անսպառ փաստերն են, որոնք մեծ մասամբ վերաբերում են հայ ժողովրդի պատմության առավել մութ և այլ աղբյուրներով թույլ ապահովված շրջաններին: Անհնար է դնահատել ու արժեքավորել փաստերի այդ զանազանը իր ամբողջության մեջ, և նրա իրական ճանաչումը

գիտություն մեջ դեռ նոր է սկսվել: Բավարարվենք մի օրինակով, նշելով Խորենացու մատուցած մի քանի կարևորագույն փաստեր, ասենք, հայ պետականության սկզբնավորման ու զարգացման ընթացքը դիտականորեն լուսաբանելու համար:

Արձանագրենք նախ, որ դրա հնագույն շրջանը միայն Խորենացին է, որ ուրվագծում է: Նրա պատմածը հայկական առաջին թագավորության ստեղծման մասին Պարույրի օրոք մ. թ. ա. VII դարի վերջերին, ինչպես համարում են հետազոտողները, համապատասխանում է օտար հավաստի (սեպագրական և հունական) աղբյուրների տվյալներին այդ ժամանակաշրջանի իրողությունների մասին, այն է՝ Խսորեստանի ջախջախմանը հզորացած Մարաստանի և նրա դաշնակից Բաբելաստանի կողմից:

Հայ պետականության զարգացման հաջորդ փուլը, որ լուսաբանում է Խորենացու «Պատմությունը», վերաբերում է մ. թ. ա. VI դարի կեսերին: Հայաստանը արդեն մեծ երկիր է, տարածված Հայկական լեռնաշխարհի մի ստվար մասում: Այստեղ իշխում է նովանդ թագավորը (Սակավակյաց մականվամբ) և այնուհետև նրա որդի Տիգրանը: Վերջինս դաշնակից է եղել Կյուրոս Մեծին, որը ջախջախեց Մարական տերությունը և հաստատեց նոր աշխարհակալություն՝ Արեմենյան Պարսկաստանը: Տիգրանը ևս հաղթական պատերազմ էր վարել մարական թագավոր Աթահակի դեմ: Խորենացու այս տեղեկությունները ներդաշնակում են մ. թ. ա. V—IV դարերի հույն հեղինակ Քսենոփոնի «Կյուրոսպեդիա» երկում հանդես եկող հայկական թագավորության ու թագավորի, նրա որդի Տիգրանի՝ Կյուրոսի բարեկամի և դրանց մասին այլևայլ մանրամասնությունների նկարագրության հետ:

Մեծ Հայքի միացյալ պետության ստեղծումը մ. թ. ա. II դարի առաջին կեսում, որ հայ պետականության զարգացման հանգուցային կետերից մեկն է, և ժամանակի հայոց թագավոր Արտաշես I-ի կերպարը իրենց արտացոլումն են գտել անտիկ պատմագրության մի շարք ներկայացուցիչների հակիրճ ցուցումների մեջ: Խորենացին Օղյունյա քուրմի անունով մանրամասն ներկայացնում է այդ նույն եղելությունների պատմությունը, որը, ինչպես արդեն նշվել է վերը, դարմանալիորեն հարադատ է անտիկ աղբյուրների տվյալներին և էսպես լրացնում է նրանց հաղորդումները:

Հատուկ նշանակություն ունի Արշակունիների հարստության ներկայացուցիչ Վաղարշակի՝ Հայաստանում գահակալման և պետության կազմավորման ուղղությամբ ծավալված գործունեության մանրամասն պատմությունը, որ անում է Խորենացին: Այստեղ նա հայտնում է հին հայկական պետական մեքենայի, արքունիքի, զորքի, արդարադատության և այլևայլ պետական հիմնարկների մասին այնպիսի տեղեկություններ, որոնք իսպառ բացակայում են Հայաստանին վերաբերող օտար աղբյուրներում, քանի որ սրանց ուշագրությունը սեղծված է եղել նրա արտաքին հարաբերությունների՝ պատերազմների և դիվանագիտության վրա:

Հայտնի է, որ Արշակունիների հաստատումը Հայաստանում տեղի է ունեցել այլ պատմական պարագաներում և այլ ժամանակ, քան նկարագրում է Խորենացին, և որ Վաղարշակի, որպես բարեփոխիչ թագավորի կերպարը, փաստորեն, հավաքական, հայոց մի շարք թագավորների գծերն ու գործունեությունը արտահայտող կերպար է: Այնուհանդերձ, հայկական պետության կառուցվածքի մասին վերահիշյալ տեղեկությունները պատմական են և ճշմար-

տացի, ինչպես այդ երևում է դրանց համեմատությունից Հայաստանի այն ժամանակվա հարեան երկրների համապատասխան հիմնարկների հետ, ուստի և պիտանի են որպես պատմական աղբյուր օգտագործվելու համար:

Վերջապես, հորենացուն ենք պարտական հին հայկական պետության եզրափակիչ փուլի՝ Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև Մեծ Հայքի բաժանման պահից (387 թ.) մինչև Արշակունիների վերացումը (428 թ.) ընկած ժամանակաշրջանի մանրամասն պատմության համար, որը չլինելու դեպքում պիտի բավարարվեինք Ղազար Փարպեցու մոտ հանդես եկող՝ փաստերով անհամեմատ ավելի աղքատ շարադրանքով:

Կարելի է, իհարկե, անվերջ շարունակել հայ պետականության մասին հորենացու հաղորդած արժեքավոր փաստերի թվարկումը. օրինակ, բնութագրել նրա պահպանած տեղեկությունները հին Հայաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների, նրանց զարգացման վերաբերյալ, բնագավառ, որը առանձնապես աղուտ է լուսաբանված աղբյուրների առկա նյութերով և այլն, և այլն:

Ի վերջո, անդրադառնանք այն մեծագույն պարզեցներից մեկին, որ արել է հորենացին իր ժողովրդին, պահպանելով իր երկի էջերում նմուշներ նրա հնագույն հոգևոր մշակույթից՝ հեթանոսական կրոնից և ժողովրդական բանահյուսությունից:

Հայկ, Արամ, Արա Գեղեցիկ, Տորք, Աստղիկ և այլն, այս անունները և նրանց հետ կապված առասպելները հայերի հեթանոսական կրոնի և հավատալիքների հնագույն շերտից եկող նմուշներ են, որոնք ցույց են տալիս, որ դեռևս Արամայդի, Վահագնի, Անահիտի, Միհրի և իրանական աստվածանուններ կրող մյուս աստվածներից կազմված հայկական պանթեոնից առաջ հայերն ունեցել են մի նախնական, առավել հին պանթեոն, որը արգասիք է ներանց հնագույն ինքնատիպ մշակույթի, որը աղերսներ է դրսևորում հինարեւելյան՝ ուրարտական, իսթական, ասուրական և այլ մշակույթների հետ: Զրիներ հորենացին, ի՞նչ կիմսնայինք մենք այդ մշակույթի մասին: Երկրորդ պանթեոնը նույնպես, որը իրերի բերմամբ փոխարինեց առաջինին, մեր առջև պատկերանում է նշանակալից չափով հորենացու հաղորդումների շնորհիվ նրանից ենթադրելով, որ այդ իրանական աստվածները հայկական հողի վրա հանդես են գալիս միանգամայն փոխակերպված, ազգայնացած ձևով, որ այստեղ պաշտվել են չորս տարբեր Արամայդներ, բացակայել է պարսկական կրոնին հատուկ դուալիզմը՝ չարի և բարու և վերջիններս մարմնավորող երկու աստվածների մշտնջենական պայքարի զաղափարը: Հաղառամյակների խորքից հորենացին փրկել ու մեզ է հասցրել Վահագնի ծննդյան մասին երգը: Դարձյալ պատմահայրն է, որ հաղորդում է հելլենիստական շրջանում հայ հեթանոսական կրոնի նոր ձևափոխությունների մասին, երբ հայկական աստվածներին ժամանակավորապես միախառնվում են հունական աստվածները՝ Զևսը, Ապոլոնը, Արտեմիսը, Հերակլը: Նույն է, որ հաղորդում է հին Հայաստանում նաև յուրատիպ «բաղարական» կրոնի գոյության՝ թագավորի ու նրա նախնիների աստվածացման ու պաշտամունքի մասին և այլն: Այս բոլորը հորենացին է, որ փրկել է մոռացության գրկից և վերադարձրել ժողովրդին:

Սրանից ոչ պակաս, մի գուցե և ավելի կարևոր են հորենացու պահպանած հնագույն ժողովրդական բանահյուսության նմուշները, որոնք վկայում են, որ «Սասնա ծռերից» առաջ մենք ունեցել ենք նույնքան փառավոր ավելի

հին էպոս և այլևայլ էպիկական երգեր: Խորենացին ներկայացնում է դրանց նմուշները ճիշտ այն տեսքով, ինչպես որ լսել է ժողովրդական երգիչների՝ գուսանների բերանից: Հարկ է շեշտել, որ «Արտաշես և Սաթմեհի», «Արտաշես և Արտավազդ» և այլ էպիկական երգերի՝ նրա մեղ հասցրած հատվածները ոչ միայն բանահյուսության, այլև հին հայերեն լեզվի, V դարից էլ ավելի վաղ գործածված լեզվի վիճակն արտացոլող նմուշներ են:

Եթե սրանց ավելացնենք նախամաշտոցյան շրջանի հայ պատմագրության վերը բնութագրված այն նյութերը, որ ներառել է Խորենացին, ապա կարելի է ասել, որ նա իր «Հայոց պատմության» մեջ պահպանել է երբեմնի ծաղկած ամբողջ մի քաղաքակրթության՝ նախաքրիստոնեական հայ քաղաքակրթության հոգևոր հատվածի եզակի հետքերն ու նմուշները:

6

«Հայոց պատմությունը» արդյունք է մի կողմից նրա հեղինակի հանձարի, մյուս կողմից՝ քաղաքացիական բուռն ղգացումի: Այդ ղգացումը, որը մենք չէինք ցանկանա բնութագրել սոսկ «հայրենասիրություն» սովորական դարձած բառով, ամենավե՛հ ու ազնիվ ձևով դրսևորվում է «Պատմության» յուրաքանչյուր էջում՝ առաջինից մինչև վերջինը: Խորենացու քաղաքացիական ղգացումը շեշտված ողբերգական գունավորում ունի և այս ասում ենք ոչ միայն նրա երկը եզրափակող «Ողբի» աղեցնության տակ, այլ՝ բուն «Պատմության»: Խորենացու ողբերգության ակունքը նրա հույսերի, քաղաքական համակրանքի, ջատագովության երկփեղկման մեջ է՝ դժանք բաժանվում, կիսվում են ժամանակի հայ ժողովրդի երկու ղեկավար ուժերի միջև. մի կողմից՝ նախարարության, որի մեջ էր տեսնում պատմահայրը իր ժողովրդի կարողությունների մարմնավորումն ու ապագան և, մյուս կողմից՝ կենտրոնական թագավորական իշխանության, որը կոչված էր միավորելու, ամրապնդելու երկիրը, ժողովուրդը արտաքին իշխամու գեմ և որպես այդպիսին չէր կարող սկզբունքով չնվիրագործվել պատմահոր կողմից, ինչն ա հաճախ խստորեն ու բնադատաբար էր արտահայտվում մի շարք թագավորների մասին: Բայց ահա, այդ երկու ուժերը հակամարտության մեջ էին, արյունալի հակամարտություն, որը կամա-ակամա սատարելով արտաքին հզոր ուղմա-քաղաքական ուժերի՝ Պարսկաստանի և Բյուզանդիայի՝ Հայաստանը ջլատող քաղաքականությանը, հանգեցրեց երկրի անկախության կորստյանը...

Այստեղից էլ ծնվում է «Հայոց պատմության» հեղինակի ձգտումը՝ պատմության ուժով հաղթահարել այդ դառն իրականությունը, հակադրել նրան ներդաշնակ ու պանծալի անցյալը, ահն օրինակ ծառայեցնել ներկային՝ ներկայի բախտը սնօրինողներին և իրեն՝ ժողովրդին, քաղաքացիականության դաս տալ նրանց:

Խորենացու՝ իբր երկին տված այս նպատակադրումը լիովին իրականացել է. ինչպես ինքը պատմահայրը քրտնաջան աշխատել է իր դժվարին խնդիրը «Հայոց պատմության» ստեղծումը, իրագործելու համար, այնպես էլ նրա ստեղծած «Հայոց պատմությունը» իր ծննդյան օրվանից դարեր շարունակ բանել ու գործել է գերագույն արդյունքով. կրթել է հայ հասարակության շատ ու շատ սերունդներ, կաղմակերպել նրա մտավորականության գիտա-քաղաքական միտքը, քաջության ու մարդկային բազում բարեմասնությունների օրինակներ ցուցադրել դժվարին հանապարհ կտրող ժողովրդին:

Նոր ժամանակներում հորենացու «Պատմությունը» դարձել է համաշխարհային գիտության ուսումնասիրման առարկա: Նրանով, բացի հայերից, զբաղվել են անգլիացի, ֆրանսիացի, գերմանացի, ռուս, իտալացի և այլ ազգերի գիտնականներ: «Պատմությունը» թարգմանված է՝ լատիներեն, ռուսերեն, ֆրանսերեն, իտալերեն, գերմաներեն, հունգարերեն լեզուներով և այժմ թարգմանվում է անգլերեն: Նման լայն ձանաչման ու հետաքրքրության պատճառներից մեկն էլ այն է, որ պատմահայրը հայ ժողովրդի պատմությունը դիտել է ոչ թե ինքնամիտի ու մեկուսի, այլ համաշխարհային պատմության շրջանակներում: Նրա տեսադաշտի մեջ էր ժամանակի ողջ քաղաքակիրթ աշխարհը՝ Բրիտանիայից մինչև հեռավոր Չինաստան: հորենացին շարադրել է Հայաստանի պատմությունը մերձակա և նրա հետ առնչվող բոլոր մյուս երկրների պատմության փոխադարձ կապերի ոլորտում: Ուստի նա առավել կամ նվազ արժեքավոր տեղեկություններ է հաղորդում հին Բաբելոնի, Ասորեստանի, Պաղեստինի, Ուրարտուի, Աքեմենյան Պարսկաստանի, Հունաստանի, Սելևկյանների տերության, հին Հռոմի, Պարթևստանի, Սասանյան Պարսկաստանի, Բյուզանդիայի, Ասորիքի, Վրաստանի, Աղվանքի, Հյուսիսային Կովկասի ժողովուրդների մասին, որով և դառնում է հիշյալ երկրների պատմության սկզբնաղբյուրներից մեկը:

Նա արժվի նման ձախրում էր բարձունքներում և իր խորաթափանց հայացքով ընդգրկում ամբողջ աշխարհը: Եվ ահա հենց այս է հնարավորություն տվել նրան խորապես ըմբռնել սեփական ժողովրդի տեղն ու գերը և տալ նրա վեհ ու անմահ բնութագիրը. «...թեպետ և եմք ածու փոքր և թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, և զօրութեամբ տկար և ընդ այլով յոլով անգամ նուաճեալ թագաւորութեամբ, սակայն բաղում գործք արութեան գտանին գործեալ և ի մերում աշխարհիս, և արժանի գոռչ յիշատակի...»:

Այդօրինակ սխրագործություններից մեկն է ահա և իր՝ հորենացու «Հայոց պատմությունը»:

МОВСЕС ХОРЕНАЦИ И ЕГО «ИСТОРИЯ АРМЕНИИ»

Доктор историч. наук Г. Х. САРКИСЯН

(Резюме)

На основе изучения данных «Истории Армении» обрисовывается творческий облик Отца армянской истории и характеризуется его труд как плод высокой гражданственности и глубочайшего проникновения в насущные нужды армянского народа в период кризиса древнеармянской государственности в IV—V вв. Дается характеристика необычайно развитого для того времени исследовательского подхода Хоренаци к созданию «Истории». Характеризуются также источники «Истории Армении», методы обработки данных этих источников и уникальное историографическое значение труда Хоренаци для воссоздания картины древней истории и культуры армянского народа.